«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր
պաշտոնակատարի
10.03.2020թ. թիվ 164 Ն/Կ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՀԵՏԱՋՈՏՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 2, 27.02.2020թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 2, 18.03.2021թ.

ՎԱՆԱՁՈՐ
2020 թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն փաստաթուղթը սահմանում է Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) հետազոտողի գիտակրթական ծրագրով ասպիրանտուրայի (առկա, հեռակա) ընդունելության և հայցորդության ձևակերպման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգը իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 25.02.2016թ № 238-Ն հրամանի և հրամանի հավելվածի:

3. Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը սովորում է ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու, իսկ հետազոտողի հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի առկայության դեպքում՝ նաև համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար[1]:

4. Հայցորդը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը բուհին կամ կազմակերպությանը կից պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն[2]:

II. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Համալսարանը իրավունք ունի ասպիրանտական կրթություն իրականացնել հետևյալ մասնագիտություններով.

Բ.00.04 Ֆիզիկական քիմիա
Գ.00.05 Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա
Է.00.01 Հայոց պատմություն
Ժ.02.01 Հայոց լեզու
ԺԳ.00.01 Մանկավարժության տեսություն և պատմություն
Ժ.01.01 Հայ դասական գրականություն:

III. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. Համալսարանի ասպիրանտուրա մրցութային կարգով կարող են ընդունվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները:

7. Առկա ուսուցմամբ ասպիրանտուրայում ուսուցման ժամկետը 3 (երեք) տարի է, հեռակա ուսուցմամբ՝ 4 (չորս) տարի:

8. Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա և հեռակա ուսուցմամբ, պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) իրականացվում է ՀՀ կառավարության կողմից առանձին մասնագիտություններին հատկացրած ուսուցման տեղերի համար՝ սահմանված ժամկետներում:

9. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է Համալսարանի կողմից սահմանված ժամանակահատվածում:

10. Ասպիրանտուրայի առկա և հեռակա ուսուցմամբ, պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ ընդունելության մասին տեղեկատվությունը տեղադրվում է

[1] ՀՀ ԲՈՀ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով, տեղեկագիր 18, Երևան, 2015, էջ 35:
[2] Նույնը, էջ 36:

Համալսարանի կայքէջում՝ հայտարարությունների բաժնում, ինչպես նաև տարածվում է հանրապետական նշանակության որևէ լրատվամիջոցով:

11. Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացված է հավելված 1-ում:

IV. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

12. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար Համալսարանի ղեկավարության հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորի նախագահությամբ:

13. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների անցկացման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ Հանձնաժողով):

14. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:

15. Մասնագիտական քննության ժամանակացույցը Համալսարանի ռեկտորի (ռեկտորի պաշտոնակատարի) կողմից հաստատվելուց հետո ներկայացվում է ԿԳՄՍ նախարարություն:

16. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման օրվա, տեղի և ժամի մասին տեղեկատվությունը տեղադրվում է Համալսարանի կայքէջի հայտարարությունների բաժնում՝ քննության օրվանից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ:

17. Մասնագիտական քննության հարցաշարը կազմվում է Համալսարանի համապատասխան ամբիոնի կողմից և հաստատվում է Համալսարանի ռեկտորի (ռեկտորի պաշտոնակատարի) ստորագրությամբ:

18. Ընդունելության մասնագիտական քննության հարցատոմսերը կազմվում են հարցաշարի հիման վրա և քննության անցկացման օրվանից երկու օր առաջ հանձնվում են Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժին:

19. Հարցատոմսերը հաստատվում են քննական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և Համալսարանի կնիքով:

20. Ընդունելության մասնագիտական քննությունն անցկացվում է բանավոր կամ գրավոր ձևով՝ համաձայն ընդունող հանձնաժողովի որոշման:

21. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր:

22. Հարցատոմսը պարունակում է 4 (չորս) հարց, յուրաքանչյուր հարց գնահատվում է 5 (հինգ) միավորով:

23. Մասնագիտական քննության ամփոփիչ գնահատականը հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականի միջին թվաբանականն է:

24. Բանավոր քննությունը ձայնագրվում է և ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց 24 ժամվա ընթացքում:

25. Մասնագիտական քննության բողոքարկման ընթացակարգային պահանջներն են.

1) Դիմորդը կարող է մասնագիտական քննության տվյալ հանձնաժողովին արդյունքների հրապարակումից հետո մեկ ժամվա ընթացքում՝ հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը, որը քննարկվում է նույն օրը:

2) Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը:
Քննարկման արդյունքում կայացվում է որոշում՝
ա) գնահատականը թողնել անփոփոխ,
բ) գնահատականը բարձրացնել:
3) Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից:
4) Գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:
26. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:
27. Ասպիրանտների հրամանագրումը կատարվում է Համալսարանի ռեկտորի (ռեկտորի պաշտոնակատարի) հրամանով՝ նրանց հետ կնքելով համապատասխան պայմանագիր (հավելված 2):

V. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Համալսարանում հայցորդությունը իրականացվում է վճարովի հիմունքներով՝ 5 (հինգ) տարին չգերազանցող ժամկետով:
29. Համալսարանում հայցորդության համար փաստաթղթերի ընդունումը կատարվում է տարին մեկ անգամ՝ ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 20-ը:
30. Հայցորդ ձևակերպվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացված է հավելված 3-ում:
31. Հայցորդի կցագրումը կատարվում է դիմումների և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ընդունման վերջնաժամկետից հետո 10 օրվա ընթացքում՝ համապատասխան ամբիոնի դրական կարծիքի հիման վրա, ռեկտորի (ռեկտորի ժամանակավոր պատասխանատուի) հրամանով: Հայցորդների հետ կնքվում է համապատասխան պայմանագիր (հավելված 2): Հայցորդի հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի համար նրա կողմից վարձավճարը մուծելուց հետո:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

32. Սույն ընթացակարգը հաստատվում և դրանում փոփոխություններ են կատարվում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

33. Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

32. Գիտական խորհրդի կողմից սույն ընթացակարգը հաստատելուց հետո ուժը կորցրած ճանաչել «ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՎՊՀ-ում ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՄԱՆ», ընդունված ՎՊՀ գիտխորհրդի նիստում, արձանագրություն թիվ 2, 26.02.2015թ:

Հավելված 1.

ՑԱՆԿ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Դիմում՝ Համալսարանի ռեկտորի (ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի) անունով,
2. բակալավրի և մագիստրոսի (կամ դիպլոմավորված մասնագետի) դիպլոմների և դրանց հավելվածների պատճենները,
3. անձնագրի պատճենը,
4. «Օտար լեզու» և «Տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների ատեստավորման վկայականները կամ դրանց համապատասխան տեղեկանքները (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),
5. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,
6. ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),
7. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Հավելված 2.

Ասպիրանտուրի հետ կնքվող պայմանագրի օրինակ (հեռակա հիմունքներով, անվճար)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«__» _____ 202թ. **ք. Վանաձոր**

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող «ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան»), որը գործում է իր կանոնադրության հիման վրա՝ ի դեմս ռեկտոր_____ մի կողմից, և Համալսարանի «_____» մասնագիտության հետազոտողի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ասպիրանտուրա ընդունված

_____

անուն, հայրանուն, ազգանուն

_____

հասցե

մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշումը, 13.04.2017թ. թիվ 371, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 21-ի N1167-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին հրամանի և հրամանի հավելվածի, Համալսարանի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

2.1.Սույն պայմանագրի առարկան Համալսարանում հետազոտողի կրթական ծրագրով ասպիրանտուրայում (հեռակա) ուսումնառության իրականացման պայմաններն են:

2.2. Հեռակա ուսուցման տևողությունը 4 տարի է:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1. Համալսարանը պարտավոր է.

3.1.1ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնած դիմորդին՝ _____ հրամանագրել Համալսարանում որպես Ասպիրանտ՝ հեռակա ուսուցմամբ, պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առանց տարկետման իրավունքի, առավելագույնը 4 (չորս) տարի ժամկետով ուսանելու համար,

3.1.2. Ասպիրանտի հրամանագրման օրվանից ոչ ուշ, քան 3 (երեք) ամսվա ընթացքում սահմանված կարգով կազմակերպել «_____ » մասնագիտությամբ ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումը,

3.1.3. ասպիրանտուրայում ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար սահմանված [illegible] հաստատել Ասպիրանտի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը,

3.1.4. ուսումնառության տարիներին Ասպիրանտի համար ստեղծել գիտակրթական գործընթացն [illegible] անհրաժեշտ բոլոր պայմանները,

3.1.5. անհատական պլանին համապատասխան՝ ներկայացված հաշվետվության հիման վրա յուրաքանչյուր տարի ատեստավորել Ասպիրանտին,

3.1.6. ատենախոսությունը չպաշտպանած կամ նախապաշտպանությունը չանցած Ասպիրանտին իր [illegible] Համալսարանի կողմից անվճար տրամադրել ակադեմիական տեղեկանք՝ Ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը Համալսարանի ռեկտորին ներկայացնելուց [illegible] հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

3.1.7. Ասպիրանտին համապատասխան ամբիոնի կողմից տարեկան հատկացնել առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն,

3.1.8. ապահովել անհրաժեշտ պայմաններ տեսական և գործնական արդյունավետ ուսուցման համար՝ պահպանելով կրթական չափորոշիչները

3.2. Համալսարանն իրավունք ունի՝

3.2.1. ատեստավորում չանցած Ասպիրանտին Ռեկտորի հրամանով ազատելու Համալսարանից,

3.2.2. լուծելու պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

3.3. Ասպիրանտը պարտավոր է՝

3.3.1. պահպանել Համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները,

3.3.2. որպես ասպիրանտ հրամայնագրվելուց և ռեկտորի հետ պայմանագիր կնքելուց հետո եռամսյա ժամկետում Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել իր՝ գիտական թեմայի և գիտական թեմայի ղեկավարին վերաբերող տվյալները, ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը,

3.3.3. իր անհատական պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր ուս. տարվա վերջում ներկայացնել հաշվետվություն՝ կատարած ուսումնական և գիտահետազոտական աշխատանքի մասին,

3.3.4. սահմանված կարգով հանձնել ուսումնական պլանով նախատեսած ստուգարքները, քննությունները,

3.3.5. պետական պատվերի շրջանակներում ուսումն ավարտելուց հետո աշխատանքից հրաժարվելու դեպքում Համալսարանին փոխհատուցել ուսումնառության տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեից իր վրա ծախսված գումարը:

3.3.6. հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակել համապատասխան կրեդիտներ, ավարտել ատենախոսությունը և անցկացնել ատենախոսության նախնական քննարկում:

3.4. Ասպիրանտն իրավունք ունի՝

3.4.1. տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին, ունենալու երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ,

3.4.2. գիտական հետազոտություններ կատարելիս կազմակերպության աշխատողների հետ հավասարապես օգտվելու գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից:

3.4.3.ատենախոսությունը չպաշտպանելու դեպքում, իր ցանկությամբ, անվճար տրվում է հաստատության կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը հաստատության ղեկավարին ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է ասպիրանտուրայում ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված դեպքերի:

4.2. Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

4.2.1. Ասպիրանտի կողմից տարբեր պատճառներով Համալսարանում հետազոտողի կրթական ծրագրով գիտակրթական գործընթացի ընդհատման դեպքում.

4.2.2. Ասպիրանտի կողմից պայմանագիրը կնքելուց հետո եռամսյա ժամկետում Համալսարանի գիտական խորհրդի և պատմության ամբիոնի հաստատմանը ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսած աշխատանքների պատշաճ կերպով չկատարման դեպքում.

4.2.3.Ասպիրանտի կողմից աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման դեպքում.

4.2.4. Ասպիրանտի կողմից համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով, ուսումնական ծրագրով սահմանված կարգով իր պարտականոնքյունները չկատարելու դեպքում.

4.2.5. Համալսարանի կողմից սույն պայմանագրով նախատեսված գիտակրթական գործընթացի չապահովման, ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած մասնագետին համապատասխան մասնագիտությամբ աշխատանքի տեղավորելու պայմանների խախտման դեպքերում:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու հավասար իրավական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ:

5.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու պահից:

5.3. Պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր ձևով, որը կհանդիսանա սույն պայմանագրի բաղկացուցիչ անբաժանելի մասը:

ՀՀ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Ասպիրանտ՝ _____

2021 ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36

ՀՎՀՀ՝ 06902542
ՀՀ՝ 16036107814200,
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ, Վանաձոր
Հեռ.՝ (+322)46387
Էլ.հասցե՝ info@vsu.am
Ռեկտոր՝ _____
(ստորագրություն)

Անձնագրի սերիա,№ _____
տրված «___» _____ 20__ թ
գրանցված_____
_____
Հեռախոս՝ _____
(ստորագրություն)

Ստացա մեկ օրինակը_____
(ստորագրություն)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« » _____ 202 թ. **ք. Վանաձոր**

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող «ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ռեկտոր՝ _____(մի կողմից), և հայցորդության հիմունքներով հետազոտողի կրթական ծրագրով ուսումնառության համար դիմորդ (այսուհետ՝ Դիմորդ)

_____
անուն, հայրանուն, ազգանուն

_____
հասցե

(մյուս կողմից), ովքեր ստորև հիշատակվում են որպես «Կողմ» և միասին որպես «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

2. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» և «Գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշումը, 13.04.2017 թ. թիվ 371, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 21-ի № 1167-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին հրամանի և հրամանի հավելվածի, Համալսարանի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրի առարկան Համալսարանում հայցորդության հիմունքներով հետազոտողի կրթական ծրագրով ուսումնառության իրականացման պայմաններն են:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1. Համալսարանը պարտավոր է.

Դիմորդին՝

_____
անուն, հայրանուն, ազգանուն

կցել Համալսարանին որպես Հայցորդ՝ առկա/հեռակա ուսուցմամբ, վճարովի հիմունքներով, առանց տարկետման իրավունքի, առավելագույնը 5 (հինգ) տարի ժամկետով «_____» «_____» մասնագիտությամբ հետազոտողի կրթական ծրագրով ուսանելու համար:

3.1.2. հայցորդության հիմունքներով ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար՝ սահմանված կարգով հաստատել հայցորդի աշխատանքային պլանը,

3.1.3. ուսումնառության տարիներին ստեղծել գիտակրթական գործընթացն ապահովող անհրաժեշտ բոլոր պայմանները,

3.1.4. տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին, տրամադրել երկամսյա արձակուրդ,

3.1.5. աշխատանքային պլանին համապատասխան՝ ներկայացված հաշվետվության հիման վրա յուրաքանչյուր տարի ատեստավորել Հայցորդին,

3.2. Համալսարանն իրավունք ունի՝

3.2.1. ատեստավորում չանցած Հայցորդին Ռեկտորի հրամանով ազատելու Համալսարանից,

3.2.2. լուծելու պայմանագիրը՝ Հայցորդի կողմից վարձավճարը չմուծելու դեպքում,

3.2.2. լուծելու պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

3.3. Հայցորդը պարտավոր է՝

3.3.1. պահպանել Համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները,

3.3.2. Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել իր՝ որպես Հայցորդի, աշխատանքային պլանը,

3.3.3. իր աշխատանքային պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր ուս. տարվա վերջում ներկայացնել հաշվետվություն՝ կատարած գիտահետազոտական աշխատանքի մասին,

3.3.4. սահմանված կարգով հանձնել ուսումնական պլանով նախատեսած ստուգարքները, քննությունները:

3.3.5 Հայցորդը պարտավոր է սահմանված կարգով վճարելու ուսման վարձավճարը:

3.6. Հայցորդն իրավունք ունի՝

3.6.2. գիտական հետազոտություններ կատարելիս կազմակերպության աշխատողների հետ հավասարապես օգտվելու գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից:

4. Ուսման վճարի չափը , վճարման կարգն ու ժամկետները

4.1. Հայցորդի ուսման վարձավճարը սահմանվում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ մեկ ուսումնական տարվա համար:

4.2. Ուսման վարձավճարի 50%-ը (150.000 դրամ) ենթակա է վճարման կցագրման հրամանից հետո 15-օրյա ժամկետում, իսկ հաջորդ վճարումները կատարվում են յուրաքանչյուր կիսամյակի սկզբից 15 օրվա ընթացքում:

4.3. Ուսման վարձը վճարվում է կանխիկ կամ փոխանցման կարգով՝ Համալսարանի բանկային

հաշվարկային հաշվին:

4.4. Ուսման վարձավճարը ուսման տևողության ընթացքում փոփոխման ենթակա չէ:

4.5. Հայցորդի կողմից սույն պայմանագրի 3.3. կետով սահմանված պարտավորությունները չկատարելու պատճառով հայցորդությունից ազատելու կամ սույն պայմանագիրը լուծելու դեպքում վճարված ուսման վարձավճարները վերադարձման ենթակա չեն:

5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը և դրա գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հայցորդության հիմունքներով հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ սույն պայմանագրի 6-րդ բաժնում նշված դեպքերի:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

6.1.1. Հայցորդի կողմից տարբեր պատճառներով Համալսարանում հետազոտողի կրթական ծրագրով գիտակրթական գործընթացի ընդհատման,

6.1.2. Հայցորդի կողմից աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման,

6.1.3. Հայցորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պայմանների խախտման,

6.1.4. Համալսարանի կողմից սույն պայմանագրով նախատեսված գիտակրթական գործընթացի չապահովման դեպքերում:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու հավասար իրավական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

7.3. Պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր ձևով՝ համապատասխան համաձայնագիր կազմելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի բաղկացուցիչ անբաժանելի մասը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
2021 ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36

Ռեկտոր՝ Ռուստամ Ռաֆիկի Սահակյան

_____

ՀԱՅՑՈՐԴ

_____

Անձնագրի սերիա, № _____
տրված «___» _____ 20__ թ.

գրանցված_____

_____

*հեռախոս*_____

_____
(ստորագրություն)

Ստացա մեկ օրինակը _____
(ստորագրություն

Հավելված 3

ՑԱՆԿ

ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Դիմում՝ Համալսարանի ռեկտորի (ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի) անունով,
2. բակալավրի և մագիստրոսի (կամ դիպլոմավորված մասնագետի) դիպլոմների և դրանց հավելվածների պատճենները,
3. անձնագրի պատճենը,
4. ռեֆերատ մասնագիտությունից (20-25 մեքենագիր էջ), կամ հրատարակված աշխատանքների հաստատված ցանկ: Կարելի է ներկայացնել նաև հոդվածները կամ դրանց առանձնատիպերը,
5. ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),
6. քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):